ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«03» հոկտեմբերի 2025 թ. N 159-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի N 79-Ն որոշման 2-րդ հավելվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Տրամադրել Ռուսաստանի Դաշնության «ԲԼԵՍԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ բնակավայրի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «2-րդ դասի շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ» ենթատեսակի համար:

2. 1-ին կետում նշված օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2026 թվականի հոկտեմբերի 25-ը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10/3/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ